ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի ազգային
պոլիտեխնիկական համալսարանի
պրոռեկտոր, պրոֆեսոր
Ա.Խ.Գրիգորյան

« 21 » 06 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

Հակոբ Վասակի Թարփոշյանի «Ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով, Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի "Տնտեսագիտություն և կառավարում" ամբիոնի 2022 թվականի հունիսի 21-ի նիստում (արձանագրություն թիվ 89):

Ատենախոսության թեմային արդիականությունը

Սահմանափակ ռեսուրսների միջոցով հասարակության կարիքների բավարարման համատեքստում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը դարձել է հրամայական տնտեսության սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության կայուն զարգացման համար: Ռեսուրսների սահմանափակ լինելը ստիպում է առկա միջոցներն օգտագործել հնարավորինս արդյունավետ, իսկ դա հնարավոր է դառնում նոր և առավել նորարարական բաղադրիչով արդիական մոտեցումների մշակման և ներդրման միջոցով: Նորարարությունը, որը մեծամասամբ իրականացվում է ձեռնարկությունների կողմից, անհրաժեշտ է ոչ միայն ռեսուսների արդյունավետ օգտագործման, այլ նաև նպատակ ունի լուծելու տարբեր ժամանակաշրջաններում ծառացած դժվարությունները, հիմնախնդիրները (արցախյան պատերազմը կորոնավիրուսային համաճարակը և այլն):

Նորարարության զարգացման և դրա միջոցով տնտեսական հավելաճ ապահովելու քայլերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նորարարությունը խթանող տնտեսական միջավայրի՝ ինստիտուցիոնալ համակարգի առկայությամբ: Պետք է փաստել, որ Հայաստանում ինստիտուցիոնալ խնդիրների առկայության հանգամանքն ակներև դարձավ հատկապես 2020թ., երբ Կորոնավիրուսային համավարակի և արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով երկիրը կանգնեց լրջագույն խնդիրների առաջ: Այս իրավիճակում ինստիտուցիոնալ խորքային վերլուծության միջոցով պետական և տնտեսական հատվածում՝ և հատկապես նորարարության ոլորտում առկա խոչընդոտները վեր հանելու և վերանայումների իրականացնելու բարձր կարևորությունը անժխտելի է:

Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում նորարարական ձեռնարկատիրության զարգացման ինստիտուցիոնալ հիմքերի ուսումնասիրության և բարելավման հիմնահարցերը, հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման բարդ և դժվարին պայմաններում:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա և դրա միջոցով բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման ուղիները: Այս նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- հետազոտել ձեռնարկատիրությանը և նորարարական ձեռնարկատիրությանը առնչվող տեսագիտական հիմքերը՝ դրանց վերաբերյալ տեսակետների դասակարգման և համադրման միջոցով,
- սահմանել ձեռնարկատիրություն, նորարարություն և նորարարական ձեռնարկատիրություն հասկացությունները գիտական և գործնական նյութերի ուսումնասիրության միջոցով,
- քննարկել ինստիտուտների և նորարարական ձեռնարկատիրության միջև կապերի վերաբերյալ ուսումնասիրությունները,
- հետազոտել ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա՝ տնտեսաչափական մոդելավորման միջոցով,
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական ինստիտուտի ձևավորման հիմքերը և հայաստանյան նորարարական ձեռնարկատիրության առանձնահատկություններն ու խնդիրները,

- գնահատել Հայաստանի Հանրապետությունում ինստիտուցիոնալ միջավայրի առկա խնդիրները՝ միջազգային ցուցիչների միջոցով համադրելի երկրների հետ համեմատական վերլուծության շնորհիվ,

բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորարարության և նորարարական ձեռնարկատիրության զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտները և դրանց չեզոքացմանն ուղղված առաջնահերթությունները՝ փորձագիտական հարցման միջոցով:

Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների ընթացքում ստացված տեսամեթոդական և կիրառական հիմնական արդյունքներն են.

- Հաշվի առնելով տարբեր նպատակներով նորարարություն, ձեռնարկատիրություն, ձեռնարկություն, կազմակերպություն և նորարարական ձեռնարկատիրություն եզրույթների կիրառման ընթացքում միասնական ընկալման անհրաժեշտությունը՝ տրվել են դրանց սահմանումներ՝ հիմնված գրականության և օրենսդրական դաշտի ուսումնասիրության վրա:
- Նորարարությունը, նորարարական ձեռնարկատիրությունը ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող տվյալների շարքերի, օրենսդրական դաշտի և պատմական փաստերի վերլուծության և համադրության միջոցով գնահատվել է Հայաստանում նորարարական ձեռնարկատիրության զարգացման հիմքերը և միտումները, ինչպես նաև բացահայտվել են առավել խոցելի խնդիրներն ու դրանց պատճառները:
- Պանելային ռեգրեսիոն երեք տնտեսաչափական մոդելների միջոցով ստուգվել են իրականացված հետազոտության հիման վրա առաջադրված չորս հիպոթեզները, ինչի շնորհիվ բացահայտվել են նորարարական ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցությունը, ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցության առանձնահատկությունները, զարգացող և զարգացած երկրներում ազդեցության առանձնահատկությունները, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության և ինստիտուտների միջև հակադարձ կապը:
- Պետական կառույցների ներկայացուցիչների, գիտակրթական հաստատությունների, ձեռնարկությունների և դրանց աջակցող կառույցների ներկայացուցիչ փորձագետների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքում ուսումնասիրվել են նորարարության և նորարարական ձեռնարկատիրության զարգացման ինստիտուցիոնալ խնդիրները և սահմանվել են դրանց լուծմանն ուղղված առաջնահերթությունները: Տվյալների վավերականությունը հաստատվել է Քրոնբախի ալֆա գործակցի միջոցով:

- Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների, այդ թվում՝ գիտական գրականության ամփոփման, քանակական վերլուծության, պանելային ռեգրեսիոն մոդելների և փորձագիտական հարցման արդյունքների հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման առաջարկությունների և դրանց իրականացման որոշ միջոցառումների փաթեթ:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Պետության կողմից բազմիցս ընդգծվել է ձեռնարկատիրության և նորարարության առաջնահերթությունը: Ըստ այդմ, սույն ատենախոսության շրջանակներում իրականացված համալիր գիտական հետազոտությունը, մեթոդական, գիտական և գործնական արդյունքները և մշակված առաջարկությունները կարող են աջակցել նախ և առաջ հենց պատասխանատու օրենսդիր և գործադիր գերատեսչություններին ու մարմիններին՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

Մյուս կողմից, ստացված արդյունքները կարող են արժեք ստեղծել նաև մի շարք այլ խմբերի, ինչպես օրինակ՝ ձեռնարկատերերի, բիզնեսին աջակցող կառույցների, միությունների և գիտական ընկերությունների համար՝ ստացված արդյունքների միջոցով նորարարական ձեռնարկատիրության բնույթի ուսումնասիրության, կարիքների բացահայտման և խնդիրների լուծման համատեքստում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, 158 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 161 էջ: Ատենախոսությունն ընդգրկում է 10 աղյուսակ, 49 գծապատկեր և 7 հավելված:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է աշխատանքի թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթը, հիմնական արդյունքները և գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Նորարարական ձեռնարկատիրության արդի հիմնահարցերը» գլխում քննարկվել է ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության կարևորությունը շուկայական տնտեսության համատեքստում,

ուսումնասիրվել են դրանց գիտական, ինչպես նաև գործնական տարբեր նպատակներով սահմանումները և դասակարգումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ձեռնարկատիրության և նորարարական գործունեության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում քննարկվել են ՀՀ-ում ձեռնարկատիրության առանձնահատկությունները և ձևավորման հիմքերը անկախության հռչակման և դրան հաջորդած ժամանակահատվածում, քննարկվել է ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության առկա վիճակը տարբեր ցուցանիշների ուսումնասիրության միջոցով: Բացի այդ, նորարարական ներուժի, ինչպես նաև ինստիտուցիոնալ միջավայրի և դրանց զարգացման միտումների միջազգային համեմատական վերլուծության միջոցով քննարկվել են ոլորտի առանձնահատկությունները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ զարգացման ուղիները» վերտառությամբ գլխում ներկայացվել են հետազոտության շրջանակներում մշակված պանելային ռեգրեսիոն տնտեսաչափական մի քանի մոդելների հիման վրա ստացված արդյունքները, որոնք թույլ են տվել քանակական չափումների վրա հիմնվելով բացահայտել տարատեսակ պատճառահետևանքային կապեր և հիմնախնդիրների լուծման ուղիներ: Բացի դրանից ՀՀ նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ վիճակը գնահատելու, առկա հիմնախնդիրներն ու դրանց օպտիմալ լուծման հնարավորությունները համապարփակ կերպով վերլուծելու համար իրականացվել է փորձագիտական հարցում՝ ոլորտի հետ առնչվող փորձագետների շրջանում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Չնայած իր դրական արժանիքներին ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից: Դրանք հետևյալներն են.

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակն հանգամանորեն ուսումնասիրելով «ձեռնարկատիրություն», «նորարարական ձեռնարկատիրություն» եզրույթների տարբեր սահմանումներ, այդպես էլ չի ներկայացրել իր կողմից ներկայացված սահմանման տարբերություններն այլ սահմանումներից, չնայած նշում է, որ գրականության և օրենսդրական դաշտի ուսումնասիրության հիման վրա իր կողմից տրվել են նշված եզրույթների սահմանումներ,(նորույթ 1, էջ 6):
2. Ատենախոսության առաջին գլխում (ենթագլուխներ 1.2՝ Նորարարական ձեռնարկության էությունը և տնտեսագիտական բովանդակությունը և Ինստիտուտները և նորարարական ձեռնարկատիրությունը) 1.3 հեղինակը բազմակողմանիորեն ուսումնասիրել է նորարարական ձեռնարկատիրության

արձանագրած քանակական և որակական զարգացումները այդ զարգացումների կայացվածությունն կանոնակարգող տեսական և էմպիրիկ մոտեցումները, մոտիվացիոն գործոնները, աստիճանական անցում կատարելով տնտեսական զարգացման և ինստիտուտների միջև կապի ապահովման հարցում ձեռնարկատիրության դերին և նշանակությանը: Սակայն, այս մոտեցումների շրջանակում՝ հետազոտության խնդիրներից մեկը համարելով փաստարկված պատասխան գտնելը ազդեցության ավելի մեծ դերի վերագրմանը հօգուտ ֆորմալ ինստիտուտների, այդուհանդերձ չեն տրվել այդ պնդմունը կամ օրինաչափությունը արտացոլող ձևակերպումներ կամ մեկտեղող եզրահանգումներ՝ որպես կատարված ուսումնասիրությունների ամփոփում, բավարավելով միայն ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների՝ ձեռնարկատիրության մակարդակի և որակի վրա «յուրովի» ազդեցության որակմամբ: Ասվածի ապահովման նկատմամբ թույլ տրված անհամապատասխանությունը համարում ենք ոչ համարժեք նաև այն պատճառով, որ աշխատանքի երրորդ գլխում (ենթագլուխ 3.1. Նորարարական ձեռնարկության վրա ինստիտուտների ազդեցության գնահատում պանելային ռեգրեսիոն մոդելի կիրառմամբ) վերջինս միևնույն ձևակերպմամբ ընդգրկվել է առաջադրված չորս հիպոթեզներից չորրորդում, որը թեպետ պանելային ռեգրեսիոն մոդելների կիրառման արդյունքներով ժխտվում է, սակայն ժխտման բացատրությունը բավարար կերպով հիմնավորված չէ և (նշվում է միայն ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների կայացման համար պահանջվող ժամանակի հնարավոր տարբերության մասին):

3. Խոսելով նորարարական ձեռնարկության ինստիտուցիոնալ կարիքների գնահատման արդյունքների մասին՝ թեև, հեղինակը կարևորել է այդ գործում հարցման մասնակից փորձագետների կողմից հնարավորինս համապարփակ չափանիշների ցանկի ընտրությունը և << նորարարական ձեռնարկությունների ինստիտուցիոնալ կարիքների ստացված գնահատականների բազմակողմանի մեկնաբանությունը, այդուհանդերձ արձանագրված արդյունքների և պայմանավորող և գործոնների նկատմամբ չեն տրվել անհրաժեշտ քայլաշարեր կամ մոտեցումներ, դրանց ապահովման ժամկետներին և նախընտրելի տարբերակներին ուղղված առաջարկներով: Նկարագրված մոտեցումները հնարավոր էր իրականացնել. քանզի անկախ փորձագետների բաշխման և տվյալների վավերականության ընտրված եղանակներից՝ ստացված արդյունքները բավական բնորոշ են խոցելի խնդիրների կարևորության վերհանման տեսանկյունից և նորարարական ձեռնարկատիրության բարելավման ինստիտուցիոնալ հիմնարար ուղիների նկարագրման համար մեր երկրին բնորոշ առավել առարկայական ճանապարհային քարտեզի ներկայացումը աշխատանքին կարող էր հաղորդել առավել ավարտուն տեսք:

4. Ուսումնասիրության երկրորդ գլխի երրորդ հարցը վերնագրված է «Ինստիտուցիոնալ միջավայրը և դրա զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում.միջազգային համադրումներ»: Կարծում ենք, աշխատանքն էապես կշահեր, եթե 90-101 էջերի շարադրանքն ամփոփ ներկայացվեր մեկ-երկու էջերում և վերջապես, կարողանայինք ստանալ այն հարցի պատասխանը (ինչը բացակայում է). թե որո՞նք են Հայաստանում ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման արդի միտումները, ավելին՝ ինստիտուտները և նորարարական ձեռնարկատիրությունը....ո՞րն է կիրառվող գործիքկազմը՝ ինստիտուտների կողմից նորարարական ձեռնարկատիրության ազդեցությունների տիրույթում, ժամանակակից ի՞նչ գործիքակազմ է կիրառվում այլ զարգացող երկրներում, ինչը կարելի էր տեղայնացնել Հայաստանում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժեքները ու ստացված արդյունքները:

Հակոբ Վասակի Թարփոշյանի «Ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Այն ներկայանում է որպես ամբողջական ավարտուն և օգտակար հետազոտություն, որում ներկայացված են ինստիտուտների դերը նորարարական ձեռնարկատիրության համար, ինչպես նաև դրանց բարելավման ուղիները: Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում նորարարական ձեռնարկատիրության ոլորտում՝ նման ձեռնարկությունների առավել արդյունավետ կառավարման և խթանման համար:

Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ ինստիտուցիոնալ մակարդակում նորարարության բարելավմանը Հայաստանում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր, ձեռնարկատիրության բնագավառում գործառույթներ իրականացնող մարմինների աշխատանքներում ինչպես նաև կրթական հաստատություններում և ձեռնարկությունների շրջանում:

Լինելով ինքնուրույն, ամբողջական բարելավող հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այսպես է կիրառական նշանակություն ունեցող նյութերով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած 7 և հեղինակի համահեղինակությամբ հրատարակված 1 գիտական հոդվածներում:

Հակոբ Վասակի Թարփոշյանի «Ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի
վարիչի ժ/պ, տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ա.Ս.Թադևոսյան

Գրախոսներ՝
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Գ.Ն.Արևշատյան

տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ջ.Ա.Թադևոսյան

Ա.Ս.Թադևոսյանի, Գ.Ն.Արևշատյանի և Ջ.Ա.Թադևոսյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀԱՊՀ գիտական քարտուղար,
տեխ.գիտ.թեկնածու Ծ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
НАЦИОНАЛЬНЫЙ ПОЛИТЕХНИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ
NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ • НАЦИОНАЛЬНЫЙ ФОНД • NATIONAL FOUNDATION • 01504054